

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017թ. ապրիլի 25-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում (Քաղաքացիական դատավարության ամբիոնի դոց. Գ.Պետրոսյան):
2. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Նորա Սարգսյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:
3. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Վ.Ավետիսյան):
4. 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողական սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:
5. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի միջև համագործակցության ծրագրից բխող մշտնադասի ժամանակացույցի հաստատում:
6. Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակի վերանայման միջնորդությամբ ԲՈՀ-ին ԵՊՀ գիտական խորհրդի միջոցով դիմելու նախաձեռնության քննարկում:
7. ԵՊՀ-ում դասերն առավոտյան ժամը 8³⁰-ին սկսելու առաջարկով ԵՊՀ ռեկտորատին դիմելու հարցի քննարկում:
8. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (Քաղաքացիական դատավարության ամբիոնի դոց. Գ.Պետրոսյան):

Զեկուցողն ընդհանուր գծերով ներկայացրեց աշխատանքային պայմանագիր կնքելիս փորձաշրջան անցնելու հետ կապված՝ աշխատանքային օրենսդրության մեջ տեղ գտած թերությունները և բացերը, հանդես եկավ այդպիսիք լրացնելու և վերացնելու սեփական աաջարկներով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Նորա Սարգսյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Նորա Սարգսյանին շնորհել դոցենտի գիտամանկավարժական կոչում:

3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Վ.Ավետիսյան):

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում քրեական իրավունք ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Հայկյանցը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Պրոֆ. Գ.Ղազինյանը, ամբիոնի գիտահետազոտական գործունեության հետ կապված, դիտարկում արեց, որ ամբիոնի առանձին ներկայացուցիչներ նախաձեռնություն չեն դրսևորում ավելի բարձր գիտական աստիճան հայցելու հարցում:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

4. ԼՍԵՑԻՆ. 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողական սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:

Ամբիոնների վարիչները տեղեկացրին, որ ուսանողական սոցիոլոգիական հարցումների արդյունքները քննարկվել են ամբիոններում: Ամբիոնների վարիչներն անդրադարձան թե ամբիոններին և թե ամբիոնների առանձին դասախոսներին տրված գնահատականներին՝ հավելելով, որ դրանք համեմատվել են նախորդ տարիների արդյունքների հետ և դրա հիման վրա կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի միջև համագործակցության ծրագրից բխող մշտնադասումների ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Վաղարշյան):

Պրոֆ. Ա.Վաղարշյանը տեղեկացրեց, որ Արցախի գործընկերների հետ միասին մշակվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի միջև համագործակցության ծրագրից բխող մշտնադասումների ժամանակացույցը: Զեկուցողն ընդհանուր գծերով ներկայացրեց 2017-2018 ուսումնական տարվա համար նախանշված միջոցառումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Պրոֆ. Գ.Ղազիսյանը գիտական խորհրդի նիստին ներկա Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի ներկայացուցիչների հավաստիացրեց, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը՝ ի դեմս պրոֆեսորադասախոսական կազմի, պատրաստ է հնարավորինս ակտիվ մասնակցություն ցուցաբերել ծրագրին և առավելագույնս աջակցել Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետին՝ հատուկ ընդգծելով նաև Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի կողմից նախաձեռնողականություն դրսևորելու կարևորությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի միջև համագործակցության ծրագրից բխող մշտնառումների ժամանակացույցը (ժամանակացույցը կցվում է):

6. ԼՍԵՑԻՆ. Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակի վերանայման միջնորդությամբ ԲՈՀ-ին ԵՊՀ գիտական խորհրդի միջոցով դիմելու նախաձեռնության քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազիսյանը:

Պրոֆ. Գ.Ղազիսյանը տեղեկացրեց, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հունվարի 20-ի թիվ 33-Ա/Ք հրամանով (այսուհետ՝ Հրաման) սահմանվել են ատենախոսությունների արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակություններին, այդ թվում՝ ԲՈՀ-ի սահմանանած ցուցակում ընդգրկվող պարբերականներին ներկայացվող պահանջները: Մինչդեռ ՀՀ ԲՈՀ-ի պաշտոնական կայքէջում տեղադրված՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանում ընդգրկված առանձին պարբերականներ չեն համապատասխանում Հրամանով սահմանված պահանջներին: Այսպես, օրինակ, ցուցակում առանձին դեպքերում պահանջված չէ Հրամանով սահմանված այն պահանջը, որ ՀՀ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկվելու համար պարբերականը ***պետք է հրատարակվի գիտական կենտրոնի, գիտական կազմակերպության, պետական կամ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորությամբ:*** Առանձին պարբերականների ընդգրկումը խնդրահարուց է Հրամանով սահմանված այն պահանջի բովանդակային իրացման տեսանկյունից, որ ***պարբերականը պետք է ունենա խմբագրական խորհուրդ, որի կազմում ընդգրկված լինեն համապատասխան ոլորտի գիտությունների դոկտորներ, ունենա որոշակի մասնագիտական ընդգրկում՝ ըստ գիտության բնագավառների:*** Խնդիրն այն է, որ առանձին պարբերականների դեպքում խմբագրական խորհրդի առկայությունը և՛ կազմի, և՛ գործունեության տեսանկյունից զուտ ձևական բնույթ է կրում, այնինչ այն պետք է լինի գործող և դրա բովանդակային ներգրավածությունն ապահովելու համար թերևս նպատակահարմար կլիներ նախատեսել խմբագրակազմի անդամների կողմից, ըստ մասնագիտությունների, գրավոր երաշխավորություն տրամադրելու պահանջ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին դիմել ՀՀ ԲՈՀ-ին ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունները ցուցակում ընդգրկելու համար ընտրված չափանիշները հստակեցնելու և հստակեցված չափանիշների խստիվ պահպանմամբ համապատասխան ցուցակը վերանայելու միջնորդությամբ:

**7. ԵՊՀ-ում դասերն առավոտյան ժամը 8³⁰-ին սկսելու առաջարկով ԵՊՀ ռեկտորատին դիմելու հարցի քննարկում:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Պրոֆ. Գ.Ղազիսյանը հայտնեց, որ դասերը ժամը 9³⁰-ին սկսելու պատճառով ֆակուլտետում բազմաթիվ խնդիրներ են առաջանում դասերի կազմակերպման ժամերի առումով, և առաջարկեց քննարկել դասերն առավոտյան ժամը 8³⁰-ին սկսելու առաջարկով ԵՊՀ ռեկտորատին դիմելու հարցը:

Պրոֆ. Տ.Բարսեղյանը և Գ.Դանիելյանը մտավախություն հայտնեցին այն առումով, որ առանձին ուսանողներ գալիս են մարզերից, և մարզային տրանսպորտի ժամերն այնպսին են, որ ուսանողները չեն կարողանա այդ ժամին հասնել դասի:

ՈՐՈՇԵՑԻՆ. Լրացուցիչ մանրամասն քննարկման առարկա դարձնել նախաձեռնությունը՝ վերջնականապես որոշելու համար համապատասխան առաջարկվող ռեկտորատին դիմելու հարցը:

8. Ընթացիկ հարցեր

8.1 ԼՄԵՑԻՆ. Քաղաքիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Արսեն Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության մեջ լրացում կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Գ.Ղազիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Լրացում կատարել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Արսեն Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության մեջ և հաստատել այն «Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տնտեսական ընկերությունների օրինակով)» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.2 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Էդգար Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Էդգար Կարապետյանի՝ «Անչափահասների դեմ կատարվող սեռական հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական բնութագիրը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Տ.Սիմոնյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.3 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Դավիթ Զիլֆիմյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Դավիթ Զիլֆիմյանի՝ «Իրավապահպան մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների քրեաիրավական և քրեակատարողական բնութագիրը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Հ.Խաչիկյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.4 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Հասմիկ Սմբատյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Ատեստավորել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Հասմիկ Սմբատյանին.

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.5 ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Իսկուհի Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ Իսկուհի Հովհաննիսյանի՝ «Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Գ.Պետրոսյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.6 ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Էմմա Բեկթաշյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ Էմմա Բեկթաշյանի՝ «Պատշաճ ծանուցման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Ս.Մեղրյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.7 ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Տաթևիկ Սարուխանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա.Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ Տաթևիկ Սարուխանյանի՝ «Հաշտարարության ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

Բ.Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Ս.Մեղրյանին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.8 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Նարինե Մանասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա.Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Նարինե Մանասյանի՝ «Վարչական դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

Բ.Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Ս.Մեղրյանին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.9 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ «Քաղաքացիական իրավունքի խնդրագիրք» խնդրագիրքը ուսումնական գործընթացում կիրառելը երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ երաշխավորել «Քաղաքացիական իրավունքի խնդրագիրք» խնդրագրքի կիրառությունը ուսումնական գործընթացում:

8.10 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Գ.Բեքմեզյանի՝ «Արտապայմանագրային պարտավորությունները» վերտառությամբ էլեկտրոնային ուսումնական ձեռնարկը ուսումնական գործընթացում կիրառելը երաշխավորելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ երաշխավորել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Գ.Բեքմեզյանի՝ «Արտապայմանագրային պարտավորությունները» վերտառությամբ էլեկտրոնային ուսումնական ձեռնարկի կիրառությունն ուսումնական գործընթացում:

8.11 ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Նելլի Աղաբաբյանի թեկնածուական ատենախոսության վերտառությունը փոփոխելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա.Փոփոխել Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ Նելլի Աղաբաբյանի թեկնածուական ատենախոսության վերտառությունը և հաստատել այն՝ «Անչափահասների գործով վարույթի իրավական և տեսական հիմքերի զարգացումը ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի կողմից 13.05.2016թ-ից մինչև 25.04.2017թ. ընկած ժամանակահատվածում իրականացված ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին

1. Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա) Դասախոսությունների անցկացման եղանակներ

Ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով ամբիոնում շարունակվել են աշխատանքները դասախոսությունների անցկացման ավանդական եղանակների արդյունավետությունը բարձրացնելու, երկրորդ և երրորդ կուրսերում ազատ հաճախում սահմանելու պայմաններում դասախոսությունները առավել գրավիչ դարձնելու և դասավանդման կիրառվող մեթոդները կատարելագործելու ուղղությամբ: Առանձին թեմաներով դասախոսություններ կարդալու համար հրավիրվել են տվյալ ոլորտի առաջատար պրակտիկ մասնագետներ (որոշ դեպքերում դասախոսությունները և գործնական պարապմունքները կազմակերպվել են կոնկրետ գործառույթների իրականացնող կազմակերպություններում), իրենց հետազոտության թեմաներին վերաբերող հարցերով դասախոսություններին ներգրավվել են նաև ամբիոնի ասպիրանտներ, կատարելագործվել են օգտագործվող դիտակտիկ և պրակտիկ նյութերը, :

Ամբիոնի գծով դասավանդվող առարկաները հիմնականում ապահովված են ամբիոնի դասախոսների կողմից հեղինակած մայրենի լեզվով դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, դասախոսության տեքստերով, մեթոդական ցուցումներով, խնդրագրքերով, թեստերով, գործնական պարապմունքի նյութերով, ծրագրերով:

Ուսումնական պրոցեսի անխափան իրականացման ռիսկերը նվազեցնելու նպատակով շարունակվել են դասավանդվող առարկաների գծով ամբիոնի անդամների վերամասնագիտացմանն ուղղված աշխատանքները:

Ամբիոնի գրեթե բոլոր անդամները զբաղված են պրակտիկ գործունեությամբ, ինչը թույլ է տալիս ուսումնական պրոցեսում ապահովել գիտություն և պրակտիկա կապը, ուսանողներին փոխանցել պրակտիկ գիտելիքներ և հմտություններ:

բ) Սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակները և մեթոդները

Հաշվետու ժամանակահատվածում կատարելագործվել է սեմինար և գործնական պարապմունքների կազմակերպման գործընթացը, ուսանողների վերլուծական միտքը զարգացնելու, նրանց պրակտիկ գիտելիքներ և հմտություններ փոխանցելու նպատակով շեշտը առավելապես դրվել է խնդիրներ լուծելու, կոնկրետ գործեր ուսումնասիրելու, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական, ՀՀ Սանմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումների վերլուծության վրա:

Բացի դրանից դասավանդվող առարկաների գծով կազմված ուսումնամեթոդական ցուցումների հիման վրա ուսանողներին հանձնարարվել է կազմել պայմանագրեր, իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումներ, իրավաբանական անձանց ստեղծման, վերակազմակերպման և լուծարման գործընթացը իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, կոնկրետ թեմաների վերաբերյալ ռեֆերատներ, ուսանողական գիտական աշխատանքներ:

գ) Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, տեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում

Ամբիոնի գրեթե բոլոր առարկաները ապահովված են համապատասխան ծրագրերով, ընթացիկ, պետական քննությունների կամ ստուգումների համար կազմել են թարմացված հարցաշարեր, թեստեր, խնդիրներ և գրավոր առաջադրանքներ:

Մագիստրատուրայում ուսման ժամանակահատվածը կրճատելու և կրթական ծրագրերը ժամանակակից չափորոշիչներին համապատասխանացնելու նպատակով կազմվել են նոր կրթական ծրագրերի մասնավորագրերը:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են «Քաղաքացիական իրավունքի խնդրագիրք (լուծումներով)» ուսումնամեթոդական ձեռնարկի (համահեղինակներ՝ Ռուֆ Քնիպեր, իրավ. գիտ. դոկտոր (Մայնի Ֆրանկֆուրտի համալսարան), Բրեմենի համալսարանի պաշտոնաթող պրոֆեսոր, Թբիլիսիի և Քիշնևի պետական համալսարանների պատվավոր դոկտոր, Վահրամ Ավետիսյան, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Գրիգոր Բեքմեզյան, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ, Արսեն Թավադյան, իրավ. գիտ. թեկնածու, Սիմոն Ֆարմանյան, իրավ. գիտ. թեկնածու) կազմման ուղղությամբ շուրջ մեկուկես տարի տարվող աշխատանքները:

2. Գիտահետազոտական աշխատանք

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի անդամների կողմից հրատարակման է հանձնվել 1 ուսումնամեթոդական ձեռնարկ էրաշխավորվել է տպագրության, հրատարակվել է 1 մենագրություն, 10 գիտական հոդված, իսկ ասպիրանտների և հայցորդների կողմից 10 գիտական հոդված, հրապարակման է երաշխավորված ասպիրանտների և հայցորդների 8 գիտական հոդված:

Ամբիոնն աշխատանքներ է իրականացրել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգերի և օրենքի նախագծերի մշակման, ՀՀ արդարադատության ակադեմիայի քաղաքացիական մասնագիտացման 2016թ. ընդունելության քննության խնդիրների կազմման, այլ բուհերի ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների քննարկման և ասպիրանտների մասնագիտական միմիմունների ընդունման ուղղությամբ:

Ամբիոնում քննարկման փուլում են առկա ասպիրանտ Արսեն Հովհաննիսյանի «Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տնտեսական ընկերությունների օրինակով)» և հեռակա ասպիրանտ Վարդուհի Դանիելյանի «Գործարար շրջանառությունում էլեկտրոնային ձևով կնքվող գործարքների իրավական կարգավորման հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունները:

3. Ուսանողների և ասպիրանտների հետ տարվող աշխատանքներ

ա) ՈւԳԸ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Ամբիոնը ուշադրություն է դարձրել ուսանողների կողմից ՈՒԳԸ աշխատանքների կազմակերպմանը:

1. Խորհրդատվական հանդիպումներ ուսանողների հետ.

Ուսանողների հետ անցկացվել են սեմինարներ, դասախոսություններ նվիրված գիտական, դիպլոմային աշխատանք և մագիստրոսական թեզ գրելու հմտություններին, ինչպես նաև պետական քննության ժամանակ խնդիրների լուծման մեթոդաբանությանը:

2. Գիտական նստաշրջանի կազմակերպում և մրցույթներին մասնակցություն.

2017թ. մայիսի 10-ին ԵՊՀ ՈՒԳԸ տարեկան նստաշրջանին քաղաքացիական իրավունք ենթաբաժնի գծով պլանավորվում է, որ կմասնակցեն շուրջ 10 ուսանողներ:

2017թ. մարտի 18-ին և 19-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) իրավագիտության մագիստրատուրայի (LLM.) ծրագրի Մեդիացիոն և Արբիտրաժային Կլինիկայի և ԷյԴիԱր Փարթներս ընկերության կողմից համատեղ կազմակերպվող ամենամյա հինգերորդ խաղ-մրցույթը՝ նվիրված առևտրային արբիտրաժին: Այս տարի մրցույթին մասնակցում էին տասներկու թիմ Հայաստանի ինը տարբեր բուհերից, այդ թվում՝ Հայաստանի ամերիկյան համալսարանից, Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանից, ՀՀ Ոստիկանության կրթահամալիրից, ՀՀ պետական կառավարման ակադեմիայից, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնից, Երևանի պետական համալսարանից, Վանաձորի պետական համալսարանից, Արտաքին տնտեսական կապերի համալսարանից և Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտից:

ԵՊՀ-ն ներկայացնում էր երկու թիմ անբիոնի անդամներ պրոֆ. Ա. Հայկյանցի և ասիս. Ա. Թավադյանի ղեկավարությամբ: Եզրափակիչ փուլում հաղթող ճանաչվեց ԵՊՀ թիմը, ինչպես նաև «Լավագույն գրավոր աշխատանք» ճանաչվեց մեր թիմի աշխատանքը:

բ) Կլինիկա

Ամբիոնի դասախոսները պարբերաբար օգնություն են ցույցաբերել կլինիկայում հերթապահություն իրականացնող ուսանողներին:

1. Ամբիոնի դոցենտ Գ. Բեքմեգյանը երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողների հետ կազմակերպել է դատական գործընթաց ընդդեմ Յուլբոմ ընկերության: Գործընթացին մասնակցությունը եղել է ակտիվ՝ դասախոսի հսկողությամբ: Գործը դատարանում է, որին մասնակցում են նաև ուսանողները:

2. Արժեթղթերը ՀՀ քաղաքացիական իրավունքում առարկայի շրջանակներում ուսանողները այցելել և դասախոսություն են լսել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ընկերությունում:

4. Կ ա դ ր ե ր ի պատրաստում և վ ե ր ապատրաստում

ա) Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք

Ամբիոնի աշխատանքային ծրագրում հատուկ տեղ է զբաղեցնում գիտամանկավարժական կադրերի պատրաստումը: Ամբիոնն ունի 4 առկա և 12 հեռակա ուսուցման ասպիրան:

Ամբիոնում պարբերաբար քննարկվում են ասպիրանտների ու հայցորդների հաշվետվությունները, նրանց գիտական հոդվածները: Ամբիոնը նրանց աջակցություն է ցուցաբերել հոդվածների տպագրման, թեզերի պատրաստման աշխատանքների կազմակերպման և նախնական պաշտպանության հարցում:

2016թ. դեկտեմբերի 9-10-ը տեղի է ունեցել, արդեն ավանդույթ դարձած, ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանը, որին մասնակցել են ամբիոնի ասպիրանտներ և հայցորդներ: Ամբիոնի 10 ասպիրանտի զեկույցները գիտական հոդվածի տեսքով հրապարակվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուում /ցուցակը կցվում է/:

բ) Ասպիրանտներին մանկավարժական աշխատանքի ներգրավում

Ամբիոնի ասպիրանտները և հայցորդները ակտիվորեն ներգրաված են ուսումնական գործընթացին: Ամբիոնի յուրաքանչյուր ասպիրանտ, բացի նախատեսված դասաժամերից, մասնակցել է նաև մյուս առարկաների թե՛ դասախոսությունների, և թե՛ սեմինար (գործնական) պարապմունքներին, ինչը նպաստելու է գիտելիքների խորացմանն ու փորձի ձեռքբերմանը:

գ) Ամբիոնի դասախոսների վերապատրաստումներ, գործուղումներ և այլ մասնագիտական գործունեություն

Ամբիոնի անդամները 2016 թ. սեպտեմբերի 19-ից 20-ը մասնակցել են «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Իրավաբանական կրթության և դասավանդման մեթոդները» թեմայով սեմինար-քննարկման աշխատանքներին (Երևան, Հայաստան):

Ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյանը 2016թ. սեպտեմբերի 21-ից 23-ը մասնակցել է «Իրավաբանական ակադեմիական կրթության համատեղումը պրակտիկ գործունեության հետ» տարածաշրջանային կլոր սեղանի աշխատանքներն (Թբիլիսի, Վրաստան) :

Թերացումները

Վերը նշված դրականի հետ ամբիոնի աշխատանքներում տեղ են գտել նաև որոշ թերություններ. մասնավորապես, անհրաժեշտ է.

- ամբիոնի անդամների գիտահետազոտական ակտիվությունը բարձրացնելու նպատակով մշակել ամբիոնի անդամների կողմից գիտահետազոտական ակտիվ գործունեություն իրականացնելուն նպաստող մեխանիզմներ:

Ամբիոնի վարիչ **Վ. Ավետիսյան**
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Մենագրություն

1. *Сона Теванян*, Правовое регулирование концессионного договора, Монография, Ереван, Изд. ЕГУ, 2016, 102 стр. (электронная книга):

Գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկ

1. *Վահրամ Ավետիսյան*, Արսեն Հովհաննիսյան, Միացման ձևով վերակազմակերպվող բանկի մասնակիցների իրավունքների պաշտպանության որոշ հիմնահարցեր, Դատականի շխանություն, թիվ1-2 (211-212) հունվար-փետրվար, 2017, էջ 60-67:
2. *Վահրամ Ավետիսյան*, Բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի համախմբման առանձնահատկությունները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ -197:
3. *Տարիել Բարսեղյան*, Գյուղացիական տնտեսության քաղաքացիաիրավական կարգավիճակը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ-175:
4. *Արմեն Հայկյանց, Վարդուհի Դանիելյան*, Սպառողների իրավունքների պաշտպանությունն էլեկտրոնային միջավայրում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016 № 2 (20), էջ 58-65:

5. Արմեն Հայկյան Ամուսնության կնքման պայմանները (հիմնախնդիրներ և դրանց լուծման ուղիները) ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ -213:
6. Դավիթ Սերոբյան, Տնտեսական գործունեության հասկացությունը սահմանադրական փոփոխությունների լույսի ներքո, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ -235:
7. Դավիթ Սերոբյան, Գուրգեն Մեղրյան Տնտեսական ընկերությունների գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց հարցի շուրջ, Դատական իշխանություն, Երևան, 2016 4-5 (202-203) էջ 48-53:
8. Գրիգոր Բերվեզյան, Պատճառական կապը դելիկտային պարտավորություններում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, -247:
9. Արսեն Թավադյան, Վինդիկացիայի և ռեստիտուցիայի հայցերի մրցակցությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ -256:
10. Армен Айкянц, Евгения Гянджумян, Генезис и значение системного подхода: философско-правовые основы (Համակարգային մոտեցման զարգացումը և նշանակությունը. իրավափիլիսոփայական հիմքեր), «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016 № 1 (19), էջ 13-21:

Ամբիոնի ասպիրանտներ՝

1. Արսեն Հովհաննիսյան, Իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպման արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 149-174:

2. **Ռուբինա Պետրոսյան,** Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կարգավիճակի սահմանումը որպես նրանց իրավունքների իրացման նախապայման ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 283-299:
3. **Գևորգ Պողոսյան,** Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական գործունեության որոշ առանձնահատկությունները ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 231-249:
4. **Նանե Սահակյան,** Պետական /համայնքային/ կարիքների համար կնքվող պայմանագրի իրավական բնույթը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 299-317:
5. **Արմենուհի Չիֆլիկյան,** Զբաղարտությունը և վիրավորանքն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 174-185:
6. **Սուլեսու Խաչատրյան,** Փոխադարձ ապահովագրության իրավական նախադրյալները ՀՀ-ում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 267-283:
7. **Նարինե Ավագյան,** Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության բնագավառում քաղաքացիաիրավական բարեփոխումները ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 185-200:
8. **Անի Սուրաֆյան,** Կամքի և կամահայտնության առանձնահատկությունները կեղծ և շինծու գործարքներում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 249-267:

9. Շուշանիկ Ղուկասյան, „Ապրանք”, „աշխատանքների կատարում” և „ծառայությունների մատուցում” հասկացությունների իրավական բնորոշման հիմնահարցը՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի համատեքստում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 200-217:
10. Մարիամ Հովսեփյան, Կորպորատիվ կառավարման մոդելների իրավահամեմատական վերլուծություն ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 217-231:

Երաշխավորված է տպագրության՝

1. Գ.Բեքմեզյան «Արտապայմանագրային պարտավորություններ» (Էլեկտրոնային գիրք)
2. Չիֆլիկյան Ա. - 3 ՀՈԴՎԱԾ
5. Հովհաննիսյան Ա.
6. Մութաֆյան Ա.
7. Ղուկասյան Շ
8. Սահակյան Ն.

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ն Արցախի պետական համալսարանի
միջնհամագործակցության մասին հուշագրի ցմբխող միջոցառումների կատարման ծրագիր-Ժամանակացույց**

2017-2018 ուսումնական տարվա համար

Հուշագրում նախատեսված համագործակցության եղանակ	Կատարման միջոցառում	Կատարման Ժամկետ/պարբերականություն	Կատարման պատասխանատու
<p>2.1. Ֆակուլտետի կողմից ԱրՊՀ պատմության ն իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի ն մագիստրատուրայի կրթական, առարկայական ծրագրերի վերանայման ն մշակման հարցում խորհրդատվության ն աջակցության տրամադրում,</p>	<p>Ներկայումս ԵՊՀ կրթական ծրագրերը վերամշակվում են: Գործընթացը կավարտվի այս ուսումնական տարվա վերջին: ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետի կրթական առարկայական ծրագրերի նոր փաթեթի տրամադրում ԱրՊՀ-ին: ԱրՊՀ-ի կողմից իրավագիտություն մասնագիտության կրթական ու առարկայական ծրագրերի վերամշակում:</p>	<p>ԵՊՀ-ի կողմից կրթական ծրագրերի ու առարկայական ծրագրերի տրամադրում՝ 2016-2017 ուս. տարի 2-րդ կիսամյակ: ԱրՊՀ-ի կողմից իրավագիտություն մասնագիտության կրթական շրագրերի վերամշակում՝ 2017-2018 ուս. տարվա ընթացքում:</p>	<p>Կրթական նառարկայական ծրագրերը ներկայացնում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը: Վերջինը, ըստ սահմանափակումների, կարող է ներկայացնել նաև խորհրդատու: Վերամշակումը կավարտվի ԱրՊՀ-ն:</p>
<p>2.2. Ֆակուլտետի դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական նյութերի տրամադրում ԱրՊՀ պատմության ն իրավագիտության ֆակուլտետին, սահմանափակումների դեպքում՝</p>	<p>Ըստ իրավագիտություն մասնագիտության ուսումնական պլանի դասընթացների ԵՊՀ-ում տպագրված դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների ռեսուրսի կազմում ն դրանց հավաքագրում՝ ԱրՊՀ-ին տրամադրելու</p>	<p>Ռեսուրսի կազմում՝ 2017-2018 ուս. տարի 1-ին կիսամյակ: Դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների</p>	<p>ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը տրամադրում է ձեռնարկներն ու դասագրքերը՝ ինչքան</p>

<p>աջակցություն ուսումնական ուսումնամեթոդական պատրաստմանը,</p> <p>դասագրքերի, ձեռնարկների, նյութերի</p>	<p>համար: Հնարավոր է նաև դրանց թվայնացում և այդ կերպ հանձնում ԱրՊՀ-ին: Հնարավորության դեպքում օժանդակել իրավագիտության մասնագիտության հատուկ ընթերցասրահի կամ ընդհանուր ընթերցասրահում հատուկ անկյունի կազմակերպմանը՝ ներառյալ թվայնացված:</p>	<p>հավաքագրում՝ 2017- 2018 ուս. տարվա 2-րդ կիսամյակի սկիզբ:</p>	<p>հնարավոր է շատ քանակով: ԱրՊՀ-ն ուսումնասիրում և քննարկում է ընթերցասրահի բացման հնարավորությունը:</p>
<p>2.3.Ֆակուլտետի և ԱրՊՀ պարբերականներում դասախոսական ներկայացուցիչների, ասպիրանտների, գիտական հրատարակում,</p> <p>և ԱրՊՀ Կողմերի կազմի հայցորդների հոդվածների</p>	<p>Ըստ անհրաժեշտության անընդհատ իրականացվող գործընթացէ</p>	<p>մշտական</p>	<p>Հուշագրիերկուկողմերը</p>
<p>2.4.Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում մասնագիտական քննարկումների, խորհրդակցությունների, գիտաժողովների, սեմինարների, կլոր սեղանների անցկացում,</p>	<p>Պրոֆեսորադասախոսական կազմի համատեղ գիտաժողովի կազմակերպում: Կազմակերպման հնարավոր կարգերն են՝ ա/ըստ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի</p>	<p>Տարեկան մեկգիտա ժողով</p>	<p>Ամենուսումնական տարում ԱրՊՀ-ն ներկայացնում է գիտաժողովի մասնակիցն երիցուցակը, մասնակիցներին և</p>

<p>մասնագիտական գրականության պատրաստում և փոխանակում,</p>	<p>պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի գրաֆիկի՝ ամենամյա, յուրաքանչյուր ուսումնական տարվա 1-ին կիսամյակի վերջ,</p> <p>բ/ Երկու կողմերի հատուկ համատեղ գիտաժողովի կազմակերպում՝ Արցախում կամ Երևանում:</p> <p>Գիտաժողովի իրականացման ձևը կարող է լինել նաև հեռահար:</p>		<p>թեմաները:</p> <p>Հատուկները կազմակերպվում են ընթացքում՝ ըստ նախապես որոշված թեմատիկայի:</p>
<p>2.5. Ֆակուլտետի դասախոսական կազմի ներկայացուցիչների կողմից իրավաբանական գիտությունների տարաբնույթ հիմնախնդիրների վերաբերյալ ԱրՊՀ-ում դասախոսությունների անցկացում, որոնք կարող են իրականացվել ինչպես անմիջական ներկայության, այնպես էլ հեռահար կարգով,</p>	<p>2017-2018 ուս. տարվա կտրվածքով պլանավորել անհրաժեշտ մասնագետների այցելությունը ԱրՊՀ՝ հիմնախնդիրային դասախոսություններ անցկացնելու համար, ինչպես նաև ելնելով տեխնիկական հնարավորություններից՝ կազմել հեռահար կլոր սեղանների անցկացման կառուցակարգ՝ ըստ անհրաժեշտության:</p>	<p>Այցիպլանի կազմում՝ 2017-2018 ուս. տարի 1-ին կիս., իրականացումը ստպլանի:</p>	<p>Հրավիրվելիք դասախոսների ու մասնագետներ իցուցակը ամեն կիսամյակ իցառաջ ներկայացնում է ԱրՊՀ-ն, իսկ այցը կազմակերպում է ԵՊՀ-ն:</p>
<p>2.6. Ֆակուլտետում ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոսական կազմի վերապատրաստման</p>	<p>1-ն փուլում կազմակերպել ԱրՊՀ-ի դասախոսների վերապատրաստման ցանկալի ռազմավարություններից և իրագործել անհատական ու խմբային վեր</p>	<p>Մինչ այդ պլանի կազմումը, այս ուսումնական տարվա վերջին՝ ապրիլ-</p>	<p>ԱրՊՀ-ն բամադրում է վերապատրաստման կարիք ունեցող մասնագետներ</p>

<p>կազմակերպում՝ թե՞ ուսուցման մեթոդիկայի, թե՞ բովանդակային կտրվածքով, որը կարող է իրականացվել ինչպես անմիջական ներկայության, այնպես էլ հեռահար կարգով,</p>	<p>ապատրաստման միջոցով:</p>	<p>մայիսամիսների իրականացնելը քրեական և վարչական իրավունքի դասախոսների վերապատրաստումը:</p>	<p>իցուցակը, իսկ վերապատրաստումը կամ ԵՊՀ-ում կամ ԱրՊՀ-ում իրականացնում է ԵՊՀ-ն:</p>
<p>2.7. Կողմերի դասախոսական կազմի ներկայացուցիչների և ասպիրանտական (հայցորդների) համատեղ գիտական կոնֆերանսների կազմակերպում՝ ապահովելով դրանց ինչպես անմիջական ներկայության, այնպես էլ հեռահար կարգով մասնակցելու հնարավորություն,</p>	<p>Ասպիրանտական համատեղ գիտաժողովի կազմակերպում, նաև հեռահար, ըստ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտական գիտաժողովի գրաֆիկի՝ առաջին կիսամյակի վերջ: Հնարավոր է նաև դրա իրականացում հեռահար ձևով:</p>	<p>Յուրաքանչյուր ու մասնական տարի</p>	<p>ԱրՊՀ-ն ներկայացնում է մասնակիցներից ուցակը:</p>
<p>2.8. Կողմերի մասնակցությամբ համատեղ հետազոտությունների անցկացում, աջակցություն ուսանողների, ասպիրանտների (հայցորդների) կամ դասախոսական կազմի ներկայացուցիչների հետազոտական ծրագրերի իրականացմանը,</p>	<p>Ուսանողների գիտական գործունեության խորհրդատուների ինստիտուտի նախատեսում ԵՊՀ-ից, ինչպես նաև զեկույցների գրախոսում ԵՊՀ-ում</p>	<p>Յուրաքանչյուր ու մասնական տարի</p>	<p>Խորհրդատուներին ասնագիտական ցանկեր ներկայացնում է ԱրՊՀ-ն, նշանակումը կատարում է ԵՊՀ-ն:</p>
<p>2.9. Ֆակուլտետում ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների ղեկավարում, թեմաների հաստատում,</p>	<p>Հուշագրի կողմերի կառավարման համապատասխան մարմինների միջև նախնական, նպատակային և</p>	<p>Ըստ անհրաժեշտության</p>	<p>Հուշագրի կողմերի կառավարման մարմիններ</p>

<p>նախնական պաշտպանության կազմակերպում,</p> <p>2.10. ԱրՊՀ լավագույն ուսանողներին Ֆակուլտետի մագիստրատուրայում ուսումը շարունակելու հնարավորության ընձեռում՝ հնարավորության դեպքում վերջիններիս համար սահմանելով անվանական կրթաթոշակ,</p> <p>2.11. Ուսանողների շարժունության ապահովում՝ հնարավորություն ընձեռելով ԱրՊՀ Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին ուսումնառության մի մասն անցկացնել Ֆակուլտետում,</p> <p>2.14. ԱրՊՀ ուսանողներին Ֆակուլտետի Իրավաբանական կլինիկայում պրակտիկա անցնելու հնարավորություն ընձեռում,</p>	<p>անհատական պայմանավորվածությամբ իրականացվող մշտական գործընթաց</p>		
<p>2.12. Կողմերի ուսանողների ներգրավում միջբուհական ուսումնական դատախազերին, մրցույթներին, կրթական այլ միջոցառումներին,</p> <p>2.13. Կողմերի ուսանողական խորհուրդների համագործակցության խթանում՝ համատեղ միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ,</p>	<p>Հանձնարարել էրկու կողմերի ՈւԽ-ներին և ՈւԳԸ-ներին հաստատել կապերում շակել տարեկան համագործակցության ծրագրեր, նկատի ունենալով նաև հուշագրի 2.12. համագործակցության ուղղությունը:</p>	<p>2017-2018 ուս. տարի 1-ին կիսամյակ:</p>	<p>Հուշագրի էրկու կողմերի վերահսկողությամբ՝ նրանց ՈւԽ-ներն ու ՈւԳԸ-ները:</p>
<p>2.15. ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետում</p>	<p>Օժանդակություն ԱրՊՀ-ի իրավաբանական կլինիկայի</p>	<p>2017-2018 ուս. տարի, 1-ին կիսամյակ</p>	<p>Հուշագրի էրկու կողմերը:</p>

<p>իրավաբանական կլինիկայի ձևավորմանը Ֆակուլտետի կողմից օժանդակության ցուցաբերում,</p>	<p>կազմակերպմանը: Առաջին քայլը ԱրՊՀ-ի կողմից կլինիկայի ապագա ղեկավարի ու պատասխանատուի նշանակում, կլինիկայի կազմակերպման և կառավարման հարցերով նրա վերապատրաստում ԵՊՀ-ի իրավաբանական կլինիկայում՝ մեկ շաբաթով:</p>		<p>Կլինիկայի ապագա ղեկավարին նշանակում է ԱրՊՀ-ն, իսկ վերապատրաստման կազմակերպումը իրականացնում է ԵՊՀ-ն:</p>
<p>2.16. Կողմերի էլեկտրոնային կայքէջերում միմյանց՝ որպես համագործակցող կառույցների վերաբերյալ տեղեկությունների տեղադրում,</p>	<p>Միջնորդել հուշագրի կողմերի կառավարման մարմիններին՝ կայքէջերում միմյանց համագործակցության վերաբերյալ տեղեկություններ տեղադրման հարցով:</p>	<p>2017-2018 ուս. տարի, 1-ին կիսամյակ: Ձևեր կորոշվի ըստ կայքէջի հնարավորության:</p>	<p>Հուշագրի կողմերի կառավարման մարմինները</p>
<p>2.17. Հնարավորության դեպքում միջազգային ծրագրերի շրջանակներում Կողմերի ներկայացուցիչների ներգրավում,</p>	<p>Ըստ հնարավորության միջազգային ծրագրերին ԱրՊՀ-ի ներկայացուցիչներին ներգրավում:</p>	<p>Հուշագրի գործողությանն ուղղված ջանքեր:</p>	<p>ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ՝ ըստ իր միջազգային համագործակցության հնարավորությունների:</p>